

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէր):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն սրբագրանայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՐԱԳՐԱԳՐԱՏԱՆԸ (հարձակայա և խաղաղարար փողոցների մակիւնում, Փամախէլի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքները «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր գործիչները. Նամակ Մոզգոսից. Նամակ վարդապետացի. Նամակ Երևանից. Նամակ Գորիսից. Ներքին լուրերը. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջխաղաղական ճգնաժամը Սպանիայում. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրերը. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ԲՈՐՍԱ. —ՅԱՅ. ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՍԱԿԱՆ. Գիւղական տպագրութիւններ:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Այնպիսի խաղաղասէրները միշտ շատ վնասներ է կրել. մասնաւոր վնասներ է կրել նրանցից, որոնք արտաքին իրանց աղաքատէր, ժողովրդի շահերին ջերմ պաշտպան են ցոյց տուել, իսկ ներքին խաղաղութիւնը երկուստեք արհեստական, դառան մորթում արեւմտեան դաշեր են եղել միշտ....

Մեր խօսքը «Մշակ» քաղաքական ճգնադրութիւններին հակառակ, դիմադրութեամբ և կեղծաւոր մամուլի մասին է: Փոքր ի շատէ մտածող ընթերցողը այդպիսիների ուղղութեան մասին մի որ և է որոշ դադարում էլ չէ կարող կաղմել. դժբանքը շարունակ պէս ամեն օր փոխում են իրանց համոզմունքները, իրանց ուղղութիւնը.... Ժամանակին և իրանց ահ ձն ա կ ա ն շ ա հ ե թ ի ն նայած մի օր հայրենասէր են, միւս օր աղաքատէր են:

ԲԱՆԱՍԻՍԱԿԱՆ

ԳԻՒԳԱԿԱՆ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանկելով Գետաշէնից 3—4 կիւրտ հեռաւորութեան վրայ, վարդապետացի մի օր խառն գնացին Գետաշէն՝ յատկապէս այդ ժողովրդական տօնին ներկայ լինելու: Գիւղում լսելու գալիս են Գանաշէնից և չըջակայ գիւղերից. շատերը—վարդապետի նախընտրած օրն է, երկուստեք ժամի 9: Գանաշէնի փողոցները անցողւորած անողնաւոր կամաց կամաց լցվում են: Նրանք բոլորն էլ սպասում են գիւղում ասողներին: Մի ամբողջ ժամ սպասելուց յետ ժողովրդի այդ անապին բազմութիւնն ուղեւորվում է դէպի գիւղում երգելու տեղը: Գնում ենք և մենք: Այդտեղ էլ մի կէս ժամ սպասելուց յետ փոխանակ գիւղում լսելու, լսում ենք—ինչ էք կարծում—հայրուհիք: Հայրուհիք մի ծեր մարդ էր: «Յամուժ չի ձեզ համար», գոռում էր նա, «էս գէշերի կէսին եկել էք մեր աղջկերանը: Թմաշայ անելու... մեր աղջկերանը հենց են...»: Ոչ մի խօսքով չէ կարողացան համոզել զայրացած ծերունուն: Ստիպված այստեղից պիտի հեռանա: Դիմել: Ասեցին թէ գիւղի միւս ծայրումն է լինել:

միտ են, մի օր արմատական են, միւս օր յետադէմ,—հայելով թէ որ կողմից է քամին փչում: Այժմ նեղն ընկած՝ սկսել են աղիտութեան մէջ դեղերով, մտաւորապէս սահմանափակ ընթերցողի աչքին թող փակ....

Համ յարձակվում են «Մշակ» դէմ, համ տօնում են մի կաթիլի վարդապետի գրական յօդուհանքը, նոյն իսկ ճաշկերպի ժամանակ կարգադրիչներ դառնալով և արտաքայտելով «Մշակ» յայտնած իրաւացի, բայց իրանց համար միշտ անելի եղած կարծիքները, այդպիսով դաւաճանալով իրանց սկզբունքներին....

Համ յարձակվում են «Մշակ» դէմ նրա յայտնած դրացի աղբերի համեմատութեան գաղափարի առիթով, համ էլ հաւատացնում են ընթերցողին, որ համեմատութեան գաղափարը յայտնողները իրանք են եղել միշտ, և ոչ թէ «Մշակ»:

Համ յարձակվում են միշտ «Մշակ» դէմ, երբ «Մշակ» այն միտքն էր յայտնում, թէ աղբուրեան գաղափարի գլխաւոր հիմքը մայրենի լեզուն է, համ էլ հիմա «Մշակին» են մեղադրում, թէ նա թշնամի է մայրենի լեզուին:

Սակայն «Մշակ» մտքերն եթէ այժմ դեռ ևս կատարելապէս չեն իրականանում, ժամանակով կիրականանան, քանի որ աղբի մեծամասնութիւնը դեռ ևս դարգացման այն աստիճանին չէ հասել, որ օգտակարը վնասակարից դատէ:

Թող մեր խաղաղամիտ մամուլի ղեկավարները վերջապէս հասկանան, որ նրանց պարտաւորութիւնը այնտեղ լինի բարձր պահել հասարակութեան աչքում մամուլի կոչումը և ոչ թէ ծառայեցնել:

Լու. շտապով գնացին ցոյց տուած տեղը, ուր արդէն բաւական ժողովուրդ կար հաւաքված: Նա մի չըջան բոլորած սպասում էր: Այդ չըջանի մի ծայրում նստած էին մի խումբ աղջիկներ. այս խմբի դիմացը չըջանի միւս ծայրին մի խումբ երիտասարդներ: Աղջիկերանց խումբը կառավարող, նրանց թելադրողը մի կին էր, տղամարդկանց խումբը—մի հասակին առած տղամարդ: Այդ կառավարիչները գիւղի մէջ յայտնի գիւղում ասողներիցն են: Հրապարակ հանգրգանք են, չուրջներս խաղաղ է տիրում: Ուշադրութիւններս լարած լուռ սպասում ենք:

Տղամարդկանց խումբը կամաց սկսում է.

Գեանջու հրդէն 1) փոշ անենք, ջան, գիւղում, ջան, ջան
Քու ոսկերիք քօշ 2) անենք, ջան, գիւղում, ջան 3),

Մին տարի ա տեսել չենք.
Եկէք եսխի 4) խօշ անենք:

Աղջիկերանց խումբը, քաղվելով ամաչելով, քիչ դողդոջուն ձայնով առաջին խմբին պատասխանում է.

Ալի մաղենք, թեփ անենք, ջան, գիւղում, ջան, ջան

1) Ուղի, ճանապարհ. 2) կօշիկ. 3) վերջին «ջան, գիւղում, ջան, ջան» բառերը կրկնվում են խրաբանչիւր տողից յետոյ, 4) թուրքերէն բառ. լուս:

իրանց գրիչը իրանց անձնական զոռելի կրքերին:

Միակ լոյսը աշխարհում ինտելիգենցիայի լոյսն է. սակայն մեր ինտելիգենցիան լոյսի փոխանակ՝ դեռ ևս ջանում է խաղաղ տարածել ժողովրդի մէջ:

Պ. Զաքարեան

ՆԱՄԱԿ ՄՈԶԳՈՎԻՑ

Յունիսի 24-ին

Շատ շուտով լինելու է քաղաքի վարչութեան ձայնաւորների ընտրութիւնը և ապա, մի քանի ամիսից յետոյ, կարծարժի քաղաքապետութեան հարցը: Թէ ո՞վ կը լինի ապագայ քաղաքապետ, դրան որոշ չենք կարող պատասխանել: Ներկայ քաղաքապետ, պ. Գովանդէս Թուշմալեան, որը մեծ մասամբ զբաղված է իր արդիւնաւոր կապալներով, լսում ենք, որ միանգամայն հրաժարվում է իր ներկայ պաշտօնից, բաւական համարվելով 16 տարի այդ պաշտօնում մնալը: Հասարակութեան մէջ քաղաքապետութեան համար թեկնածու անձինք համարվում են. 1) ներկայ քաղաքապետի օգնական, զղարկիչ Աւետիք Սարգսեան Թանդեան, որը շատ աննշան ժողովրդականութիւն ունի հասարակութեան մէջ, 2) Ս. Ստեփաննոս Երեմեան, որը իր անհատական երկնքի փոխան, զարդների եւսանդոտ հոգաբարձու, պ. Գովանդէս Գանջուան, և 3) Գովանդէս Ուլուխանեան, երիտասարդութեան սիրելին, որը զօրակ է մի քանի զօրեղ վաճառականների խնամութիւնից: Մեր կարծիքով ամենապարտաւոր ընտրելին երկուրդն է՝ պ. Գովանդէս Գանջուան, որը թէ երեքփոխանական, թէ հոգաբարձական և թէ այլ պաշտօններում ցոյց է տուել, բայց հաւատարմութիւնից և արդարաւէր զործուհեութիւնից՝ դուրսը տաք և աւանդ և, որ ամենապարտաւոր է, իսկ և չնորք: Գուանք և սպասելով, քանի որ ժամանակը շատ մօտ է:

Մեր ուսումնարանների քննութիւնները ամենայն խաղաղութեամբ վերջացան, աշակերտները համեմատած աշակերտութիւնների հետ, շատ լաւ էին հայոց և ուսաց լեզուներից և բնական պատմութիւնից, բայց թոյլ էին կրօնադիտութիւնից և թուրքաւարութիւնից: Իսկ օրիորդները լաւ էին ընդհանրապէս կրօնադիտութիւնից և մասամբ թուրքաւարութիւնից, թէ և առաջին առարկայի ուսուցիչը ուսումնական տարվան ընթացքում երկու անգամ է փոխվել: Օրիորդները թոյլ լինել մայրենի լեզուից շատ նկատելի էր:

Մեր շուանին կեանք 1) անենք, ջան, գիւղում, ջան և այլն:

Եղուց քննանք տանձուտը,

ձենջիլ ածենք, քիչ անենք:

Այս երկու տոնը, այսպէս ասած, դեռ նախաբանն է: Երկու խումբն էլ, մասնաւոր աղջիկերանց, սկզբում անխառն կերպով են երգում, բայց զնալով ոգևորվում, տաքանում են: Ժողովուրդն էլ նրանց հետ միասին ոգևորվում, խնդում, ուրախանում, քրքրում, ծիծաղում է: Գիւղիւնների մէջ աղջիկները և երիտասարդ տղամարդիկ միմեանց զովում, վիրաւորում են, փոխադարձաբար միմեանց (մի խումբը միւս խմբին) սէր, զգուհանք կամ արհամարհանք են արտայայտում: Երկու խումբն էլ միմեանց զովում, բարձրացնում, տանում երկնքիցը կախում, կամ կամաց կամաց միմեանց վատաբանում, պարտաւոր, ստորացնում, ցեխի հետ հաւասարեցնում: Այստեղ դնում ենք մի կտոր ես:

Տղամարդ. խմբ. Նստած, դիզած խոտ ծախ, ջան, գիւղում, և այլն

Քու մէջուկ փոթ 2) օնիմ.

Մին ըռահանի փոռ չ պիտի, փրկի տիկնիս, հոտ օնիմ:

Աղջիկ. խմբ. Ստեղծով տիւ անուկ 3) ես,

1) Փայտեայ փողբիլ կու. 2) փոթ կամ փոթ—պակասութիւն, բիծ. 3) այս բառի նշանակումը:

Յունիսի 27-ին կատարվեց տեղիս երկուսու ուսումնարանների տարեկարծը. անտեսական և ուսումնական տեղեկագրերը կարգաւոր հայր նախագահը և աւագ ուսուցիչները: Հայր նախագահի անտեսական տեղեկագրից միայն այն իմացանք, որ այս տարի զարգացներ մօտ 200 ռ. դեֆիցիտ են ունեցել և ոչ մի հատ մասնաւոր բարերար չէ գուրս եկել, իսկ ընդհանրապէս անցեալ տարիները բաւական դուրսներ էին դրանում մասնաւոր բարերարների, ննջեցեալների նուէրներից: Տղայոց ուսումնարանի աւագ ուսուցիչը իր մի տարվայ գործունէութիւնը քանի մի խօսքով բացատրելուց յետոյ, աղու խօսքերով դարձաւ դէպի հանդիսականները, բացատրելով ուսման կարևորութիւնը՝ Մօզգովի ուսումնարանների յարատեւ և առաջադէմ պահպանման համար: Աւագ ուսուցիչ խօսքերը, ինչպէս լսում ենք, փոքր ի շատէ աղջիկ են հասարակութեան վրայ: Բայց յարգելի հոգաբարձուները այդեօք առիթից օգուտ կը քաղեն,—հա հարց: Այս տարի տղայոց ուսումնարանից աւարտում են 3 հոգի, օրիորդներից էլ նոյնքան: Այս տարվայ աշակերտութիւնների ձեռագործները, համեմատած անցեալ տարիների ձեռագործների հետ, շատ թոյլ էին, այդ պատճառով էլ ձեռագործի վաճառուից այս տարի շատ չնչին գումար գոյացաւ:

Մ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՄԱՍՏԻՑ

Յունիսի 1-ին

Վերջացաւ 1889/90 ուսումնական տարին: Ամեն ուսումնարանի հոգաբարձուներ վարում են իրանց ուսումնարանի համար ուսուցիչներ և ուսուցչուհիներ, անում են նորութիւններ և փոփոխութիւններ, իսկ մեր ուսումնարանները չուսնն մինչև անգամ հոգաբարձուներ: Վաղարշապատից հասարակական գործերի համար վերին աստիճանի անհոգ մարդիկ են: Ոչ մի մարդ չէ կամենում ընդհանրութեան համար գործել և եթէ գործեց, այդ էլ պէտք է իմանաք, որ դարձեալ իր լեւոյն մէջն է: 800—1000 բնակիչ ունեցող Վաղարշապատն ունի երկու ուսումնարան՝ տղայոց և օրիորդաց, սակայն Աստուած ուսումնարաններ համարի: Օրիորդացը փոքր ի շատէ նման է մի բանի, իսկ տղայոց՝ ոչ միայն ուսումնարանի չէ նման, այլ ոչ մի բանի չեմ կարող նմանեցնել: Ամօթ վաղարշապատցիներին: Սենտակները ցած

Ջրաւոր Բըլանուկ 1) ես:

Ես դիտում թա մին զատ չես.

Հոտ ծնելի նստում 2) ես:

Տղ. խմբ. Գլխանք երի տարն եմ,

Ունեւոր իրար կը խառնեմ.

Կուռս վրդաւ կը բերեմ,

Կուցիլ միջակը կանանմ:

Աղջ. խմբ. Լեօր թուա էն արտան,

Կտարի ա սրտիս փեարդան 3),

Անը չի, աչը տեսաւ

Բէրաւ 4) կարին դարդեան:

Տղ. խմբ. Նստել ես նաղանի պէս,

Ման կիզաս զաղանի պէս,

Ամեն մին ինձ անանալով,

Վեր կը տաս խաղալի 5) պէս:

Աղջ. խմբ. Փորեն վրա սողումա,

Լեւա ջիւրն է հողումա:

Որ ձեր ձէրը լրում եմ

Իմ ոտներս դեօղումա:

Այսպէս երկար չարունակվում է. անցնում է մի ժամ, երկու, դեռ երգում են: Օղը գնալով

Թիւնը մենք չը կարողացանք իմանալ. միջ թվում է, որ դա տաղաչափութեան ոտը պահպանելու համար է գործածված:

1) Գետաշէնի մօտերում գտնվող փողբիլի գետակի անունն է: 2) Անանուխ: 3) Գող: 4) Չար, անպէտք: 5) Թուրքերէն բառ. չոր տերև:

են և նկատելի, լուսամուտները կոտորած, ձմեռ ժամանակ ապակու փոխարեն թղթով են կոցրած, դռներն ու մանուկները յատակը աչքով ընդհատ ցուցնում են, որ երբ մի երեխայի ձեռքից մի բան վայր ընկավ, յատակի վրա, իսկոյն կանխատեսող այդ բացուածքներում: Այս տարի դասի ժամանակ յանկարծ առատացող լույսի է եղել ձմեռուց, ուսուցիչը և աշակերտները փայտեղ են դուրս, գեղանայն էր, որ բաւական տեղ ձգեցէ՛ք էր... Այ՛ տղա, չէ՛ դարձնում: Տէնց աղպէս էլ կը մնայ, մինչև մի քանի անոնք մանուկներ չը զոհվեն: Ինչ և էլ չէ, ինչպէս ենք յարգելի վարդապետներին ու զարմանալու ուսումնարանի այդ վիճակի վրա, ընտրելու ուսումնարանները համար դործունեայ, տուկուն հոգաբարձուներ և ոչ թէ անցեալ տարւոյ նմաններն: Տեղացիները շատերն են մինչև անգամ աշակերտներին, եթէ հարցնելու լինենք, անցեալ տարւոյ հոգաբարձուների ու լինելու մասին՝ չեն իմանայ, որովհետև յարգելի հոգաբարձուները պատիւ չեն համարել ոտը անգամ կուխել ուսումնարանի չէմբը: Մինչև անգամ տարեկան հարգանքներով յանձնարող բացակայ էին: Մեր ուսումնարանի հոգաբարձուները պէտք է լինեն տեղացի, ժողովրդին մօտ ծանոթներ, քիչ թէ շատ ազդեցութիւն ունեցողներ և սեփական գործերով շատ չը ծանրանալով մարդիկ, և ոչ թէ օտար երկրացիներ: Խնդրում ենք ու զարմանալ այդ հնադարեան խարխուլ ուսումնարանի վերա, չուտով ընտրել հոգաբարձուներ և սկսել նորոգել շինութիւնը:

Երբ կը դարձնենք վերջապէս:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունիսի 29-ին

Երևանը գրեթէ դատարկ է, բոլորն էլ քաշվել են ամառահոգիներ: Ինչպէս երևում է այս տարի աւելացել է ամառացի գնացողների թիւը: մինչև այսօր էլ շատերը գնա չարժանալով են գնալ: մի խօսքով այժմ Երևանը կատարեալ ամառային է և ներկայացնում: Քաղաքի մէջ տիրացելու է սաստիկ շոգ, ինչպէս որ ասում են «երկրից կրակ է թափում», որի ազդեցութեան տակ մարդս բոլորովին թուլանում է և անկարող էլինում մի որ և է աշխատութեան: Բացի այդ, ամառայինը քամուց սարսափելի թույլ է բարձրանում, որը սովորական բան է Երևանում: Այդպիսով երևանցիները դատապարտված են մշտական շոգի ու թոզի, իսկ այդ թոզի առաջն առնելու համար այստեղ մի նոր հնար են գտել: այն է ամանային երկնային և առաւօտ վարձում են մի քանի մշակներ, որոնք սկսում են շուր սրտիկ մի որոշեալ տարածութեան վրա, որով և, իրանց կարծիքով փրկուում են Երևանը սարսափելի փոշուց:

Ինչպէս ընթերցողներին յայտնի է, անցեալ տարի Երևանի թիւնը զարգացել հոգաբարձութիւնը փակեց ՎԻ-րդ զատարանը, պատճառ բռնելով թէ՛ աշակերտներ չը կան, որ մի ուրախալի երեւոյթ չէր: քանի որ այդպիսով ուսումնարանի բարոյական նշանակութիւնը նստանում է հասարակութեան աչքում: Բայց ցածր այդ չէ: Ինչպէս երևում է

հոլանում է: Բայց մենք տեղիները չենք չարժուում, մինչև որ գիւղի զգրվը «դէ, բժէ է բժէ, վէ կացեք, ձեր տները քրնացեք» չէ ասում: Երգողները լուում են: Վեր կենում, բայց ակամայ: Խարխալելով գնում ենք տուն: Բայց, ինչպէս միւս օրն իմացանք, նրանք մէկ էլ նորից հաւաքվել, շարունակել են մի քանի ժամ հա: Գիւղացի աղջիկները քաղաքացիները քաշվում, ամառում են: Նրանց ներկայութեամբ աղաւթ, համարձակ չեն կարողանում երգել: Գլխով մեղ ղիտմամբ խաբեց, ճանապարհ դուրս, որ իրանք «անատուն», ընտանեկան նորից նստին ու երգին:

Միւս օրը Վարդապետ էր: Ժամի 10-ից սկսած դուրսն «ճանաչուում» անում էր: Մի մեծ ծառի ճիւղերից կախել էին երկու հաստ չուաններ, դրանք էին «ճենջիւղներ»: Այդ «ճենջիւղները» սովորաբար կախ են տալիս 3/4—1 արշին գետնից բարձր: Մարդիկ բարձրանում են այդ ծառերը միմեանց հետ կապած չուանի, «ճենջիւղի» վրա, կանգնում, չուանից բռնում, ստններ և ամբողջ մարմնի կռճճիկ անկող տարուբերում: Գնալով այդ տարուբերվելն արագանում, ստանկանում է, այնպէս որ ճենջիւղի վրա տարուբերվողը, կամ, ինչպէս ժողովուրդն է ասում, «ճենջիւղ անողը» ծառի (որից կախած է ճենջիւղը) բարձր ճիւղերին է դիպչում: Երկու ճենջիւղներից մէկը մարդկանց

այս տարի հոգաբարձութիւնը արամաղիլ չէ այդ դատարանը բանալու, որի պատճառը համարվում է դրամական սղութիւնը: Ահա ձեզ առաջադիւն: մոլորիւն: Արեւոք հոգաբարձութիւնը ինչ զարգացել էր կազմի մի որ և է դարձրել մասին, նկատելով այդպիսի երեւոյթներ և ինչ սրտով էր երկախաներ կը տայ կրթութիւն այդ դպրոցում, որը մի որոշ ապագայ չունի, և միթէ հոգաբարձութիւնը չէ կարողանում հասկանալ այն աշակերտների դրութիւնը, որոնք իզուր տեղը նստելով Վ դատարանում երկրորդ տարին, ստիպում են նստելու և երրորդ տարին և միթէ ուսումնարանը իր վարիլ չէ կարգիլ: այդպիսի աշակերտներն առած այն խոստմանը՝ թէ երրորդ տարին անշուշտ բաց կը լինի ՎԻ-րդ դատարանը և յանկարծ իրանց խաբված են գտնում: Վերջապէս չէ որ աշակերտը իզուր տեղը տարին է կրցնում և միթէ հասկանալի չէ նոյն աշակերտի դրութիւնը, որը այդ ուսումնարանում 8—9 տարի կարգաւոր, սպասում է մեծ ուրախութեամբ ստանալու վերջնական վկայականը: Բայց յանկարծ իր յոյսերը փշրված է տեսնում և յուսահատված թողնում է դպրոցն ու հեռանում: Եւ նոյն իսկ հոգաբարձութեան կողմից անխնայութիւն կը լինի, որ ամբողջ տարին լուռ ու մուշ նստելով, յանկարծ տարւոյ վերջը մի այդպիսի պատճառաւ թերեւ իրական, փակել մի որ և է դատարան, քանի որ հոգաբարձութեան պարտականութիւնն էր նախօրոք հոգ տանելու ուսման մասին և արգելադրել պատճառների առաջն առնելու:

Այսօր քաղաքային դատարանում պատահեց մի էրորում: հային, որը իր հետ ունէր մի փոքրահասակ տղայ: այդ մարդը նոյնութեամբ պատմում էր «Մշակի» հեռագիրներին մէջ հաղորդած էրորումի երկեցում կատարված անցքը: Դա բոլորովին յուզված էր, որ դաւով էլ միմիային, և ցանկանալով իր որդուն տալ Գեորգիան ճանաչանք, յանկարծ, իր ասելով, պատահում է կողտութեան և այդպէս փշրված յոյսով պէտք է ուղևորվի թիֆլիս, դռնէ՛ Ներսիսեան դպրոցն իր որդուն յանձնելու:

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Յունիսի 7-ին

Երջիւրաւոր անասունների տարախոխիկ հիւանդութիւնը անցեալ տարւոյ աշնանը Սիւսանի մի քանի գիւղերին մեծ վնասներ պատճառելուց յետոյ, մինչև անցեալ ապրիլ ամիսը դադարած էր, սակայն, դժբաղդաբար, նորից էլ երևաց մեր հարեան Ու-դ գիւղում, որտեղ մի քանի օրվայ ընթացքում այդ հիւանդութիւնից կոտորվել են 100-ից աւելի կովեր, կաթնի և գոմէշներ: Երկու զաւի է եթէ հիւանդութիւնը անցնի Վարդապետ գիւղը, քանի որ մեր գիւղացին հիւանդութեան վրա դարձնալի հայեացք ունի: Յայտնի է, որ այդ վարակիչ հիւանդութիւնը կարող է տարախոխ վել: իսկ այդ երկու հարեան գիւղերը իրար շատ մօտ են և դաշտերն էլ մէկ մէկին կոպած: Բայց դրա մասին մեղ մօտ ոչ ոք չէ մտածում, թողնե-

համար է: միւսը—կանանց: Չուրան սկսում է: Գիւղացիք՝ ծիծաղելով, քրքրալով, «ճենջիւղ են անում, քէֆ անում»:

Ինչի Գնտաշին գիւղում և չը գնալ գիւղից 8—9 վերտ հեռուորութեան վրա գտնվող Գեօգ գետը (կանաչ լիւն) անուանեալ լճովը, դա մի յանցանք է... Այնքան գիւղացի է նա: Երևակայեցեք, մի փքրիկ և սիրուն, երկար ու նեղ լեռնային լճակ: որի երկարութեամբ աջ ու ձախ ձգվում են անտառախիտ, գեղեցիկ սարեր: Լճակի վերին, հարաւ—արևմտեան մասում նոյնպէս անտառ: Այստեղից խաղաղութիւն կարելի է զննել: Լճակի հարաւային երկրից քիչ դէն իր հարթ է լիւր գաղաթը վեհ կերպով ցցած կանգնած: Քեպիկալ լեռը: Չուրը գարդ, վճիւ, համով է մաքուր, իսկ հեռուից լճակի գոյնը կանաչ, կանաչ խոտից էլ կանաչ: Իզուր չեն ասում Գեօգ գետը—կանաչ լիւն:

Յունիսի 29-ին էր, երբ մենք վաղ առաւօտը ձիով ճանապարհ ընկանք դէպի Կանաչ լճակ: Շրջակայ գիւղերի բնակիչներն այս լճակին մէկը լճակի կաղմկելու մասին հետեւալ աւանդութիւնը պատմեց: Առաջ, շատ առաջ Քեպիկալ

լով այդ ամենը Աստուծու կամքին: Լաւ կը լինէր եթէ մեր ամառուները, որի իրաւունքը տարածվում է Չանգեղաւորի այդ երկու գիւղերի վրա (Վարաքլիսան և Ու-դ կաղմուկ են մէկ գիւղական հասարակութիւն) խիստ միջոցներ գործընէր հիւանդութեան առաջն առնելու: Նպատակով և սատակապէս արդէն գիւղացիներին հիւանդութեան տարածման պատճառ լինելու: Հարկաւոր է գիւղացիներին պարտաւորեցնել թոյլ չը տալ առողջ անասուններին վարակածներին մօտ պահելու, հարկաւոր է սատակաշնորհ լինել առանց կաշին վերցնելու խոր թաղել հողի տակ, սատակաշնորհ կաշին տրեխներ կարելով չը հագնել և այլն, իսկ այդ հրամանները ճշգրտեալ չը կատարող գիւղացուն տուգանքի ենթարկելով պատժել: Պարզ բան է, որ դա ամառուների պաշտօնական ուղղակի պարտաւորութիւնն է: Հարկաւոր է գտնէ այդպիսի միջոցներով թոյլ չը տալ հիւանդութեան տարածվելուն, հակառակ դէպքում, ինչ ասել կուզէ, իսկ ճիշդ գիւղացու տաննակ տարիներ աշխատանք մի երկու օրվայ մէջ փչանում է, ձգելով նրան մշտական չքաւորութեան և անվերջապէս պարտքերի մէջ: Եւ առաւել, որ այստեղի գիւղացիների պարտաւոր միակ միջոցն է հոգաբարձութիւնը և անասնապահութիւնը:

Անհրաժեշտ է այստեղ նկատել, որ Չանգեղաւոր գետում չունի անասնաբոյժ, որը այսպիսի դէպքերում պիտի թշուառ լիւղացուն իր ժամանակին օգնութեան հասնէր: միմիայն հարկաւոր եղած դէպքում դատաւարեալ պաշտօնապէս հրամարում է Շուշու անասնաբոյժին, իսկ մինչև վերջինի տեղ հասնելը հիւանդութիւնը արդէն իր գործը կատարած է լինում և այն ժամանակ անասնաբոյժի ներկայութիւնը միանգամայն անօգուտ է անցնում: Օրինակի համար Ու-դ գիւղում անասունների հիւանդութիւնը սկսվել է ապրիլի 20-ից, բայց Շուշու անասնաբոյժին եկաւ մի քանի օրով և չուտով էլ վերադարձաւ Շուշու: Ինչ արեց պարտեղ այդպիսի կարճ միջոցում, ինչ յայտնի չէ, արդեօք նրա գալուստը իրականապէս օգուտ կը բերէ, թէ միմիայն ժողովրդի սիրտը մխիթարելու համար եկաւ ու գնաց:

Խօսելով անասունների հիւանդութեան մասին հարկաւոր է այստեղ յիշել, թէ ինչ հայեացք ունի մեր գիւղացին այդպիսի պատճառների վրա: Նա կարծում է թէ հիւանդութիւնը Աստուծանից է զրկվում: մարդկանց որ և է մեղքը համար, նրա դէմ չը պէտք է միջոցներ գործ զնել, թէ չէ դա Աստուծու կամքին հակառակ կը լինի և դրանով միմիայն նրա բարկութիւնը կը զրգուն: Համարձակվում եմ ասել, թէ այստեղի ժողովուրդը դադաջման ամենաստորին աստիճանի վրա է կանգնած: Երկի դրա պատճառն այն է, որ մենք գտնվում ենք քաղաքներից ու քաղաքակրթ լինաւորներից հեռու:

Տեսնենք ապագայում ինչ կը լինի: Եղածները մասին պարտաւորվում եմ իր ժամանակին հաղորդել:

սարը շատ բարձր է եղել, Մուս—սարիցն էլ բարձր: Գրա առաջն ընկած է լինում մի խոր ձոր, որի միջով հոսելիս է լինում մի մեծ գետ:

Մէկ օր երկրաշարժ է պատահում, Քեպիկալ սարը վրում է, քարերը, հողը թափում, ձորի մէջ անում, գետի առաջը կարծում: Գետը լցնում է ձորը և այդպիսով այդ ձորը դառնում է ծով: Այս ամանդութիւնը շատ մօտ է Վերակոս Գանձակեցու պատմածին, դուցէ՛ հէնց այդ պատմագրի պատմածից կազմված լինի վերալինեալ աւանդութիւնը:

«Ի չճը (1139 թ.) թուականին,—պատմում է Վերակոս Գանձակեցին,—եղաւ շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և ստապեցան շինուածք որ ի նմա, ի վերայ բնակաց իւրոց... վրա և լեռուն Ահարալի կ շարժմանէ և արդէլ զճարակն, որ անցանէր ընդ մէջ նորա և եղաւ ծովակ, որ է մինչև ցայսօր: Ընին ի նմա ձկուն աղիւրք» 1): Լճակի արեւելեան կողմում և նրա շարունակութիւնը կաղմոյ ձորի մէջ խառնելու թափված ահալին քարերը, հէնց նոյն իսկ Քեպիկալ սարի կարծես թէ դիտմամբ հարթած գաղաթը, նրա լանջերը ստուգում են, որ այդ

1) Վերակոս Գանձակեցու պատմութիւն, եր.

ՆԵՐՍԻՍ ԼՈՒՐԻՐ

Մարգարադարի ուսաց լրագիրներին մէջ ապագիւծ մի հեռագիր հաղորդում է, որ Երզրում պարսից դեսպանը ղիմելով անտեղի հայերին, առաջարկել է զաղթել Պարսկաստան, յայտնելով որ այդ դէպքում Շաիր կատակարարութիւնը տանում է տալ գաղթողներին դրամական հրպատ:

Հրկատեաց «Новое Время» լրագրում կարդում ենք. «Երկրպետն նախապէս արդեւարարութիւնը Բոսնիայի ձեռքն անցնելու հետ միասին, Բաւարում երևացին մեծ քանակութեամբ հրեաներ, որոնց թիւը միշտ աւելանում է»:

Լ. Ս. Պոլեակով, ինչպէս հաղորդում են լրագիրները, նշանակված է պարսից հիւպատոս Սոսի վայում:

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում պատկանելով մեղ ղիմող զանազան հոգաբարձութիւններին, այն կարծիքը յայտնեցիք, որ ամեն մի դպրոց իրաւունք ունի ողբան կանխում: Բռնիկ տալ իր վարժապետներին և որ ոչ ոք իրաւունք չունի արգելելու այս և այն դպրոցին մեծ վարձատրութիւններ տալու ուսուցչին կամ վարժուհուն: Մենք ենթադրում էինք, որ Ելմիթանի հոգեւոր իշխանութիւնը որոշել է վարժապետական օւժիկներին minimum-ը միայն: Սակայն, ինչպէս երևում է վեհ. Կաթողիկոսի հրատարակեալ կոմիտէից, այն դպրոցները, որոնք կառնում են որոշած գումարից աւելի տալ իրանց վարժապետին կամ վարժուհուն, պէտք է ամեն անգամ դիմեն Ելմիթանին և ստանան Կաթողիկոսի թոյլտւութիւնը կամ հաւանութիւնը:

Մեղ հաղորդում են, որ Արաշկերտի կողմերից հայերը ցանկութիւն ունեն գաղթելու: Լսում ենք, որ Բաղրեւանդի ս. Յովնանու վանքի վանահայրը Կաթողիկոս է յետ կանգնեցնել ժողովրդին այդ անմիտ և վտանգաւոր քայլից: Յոյս ունենք, որ կարելի կը լինի համոզել ժողովրդին, չը թողնել հայրենի երկիրը և չընկնել գաղթականութեան կորստաբեր հոսանքի մէջ:

Կաթողիկոսական կոմիտէի մայիսի 26-ից համար 206, Եղիշէ քահանայ Գեղաման, որ Բաղրեւանդ քահանայ էր, հաստատված է թիֆլիսի թիւի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների թիւի մէկի տն ու սոս: Կըրեօք միւս թիւերն էլ պէտք է ունենան թիւական տեսուչներ:

Թիֆլիսի փողոցներում և քաղններում մօրելս է երևացել:

Մեղ հաղորդում են, որ Բաթումի յոյներն մէջ միտք է դրացել հիմնելու յոյնաց Բարեկործանական ընկերութիւն:

Մեր խմբագրութեան մէջ ստացված է ժողովրդական ընթերցանութեան համար պիտանի երկու

լիւն առաջ է եկել սաստիկ երկրաշարժից: Լճից դուրս է գալիս կարմրախայտ: Չուրը որ ստւ են կարթով: ուղեւորով ձուկ որսալ այստեղ անհարկն է: Լճի տակը, ձկնորսների տակով քաղաքաւոր է և խոժը ծածկված: Լճակի խորութիւնը 40 սաժէն է:

Վերադարձին, երբ Գնտաշին հասուէ հաս էինք, ներկայ եղանք մի տխուր տեսարանի: Գնտաշնում, ինչպէս և շատ ուրիշ գիւղերում, այդ տարին տաւարի հիւանդութիւն կար, կոտորվածքը սաստիկ էր: Երկու սատակած եղներ սալ: Երբ վրա բարձած տանում էին գիւղից դուրս մաշկելու: Այդ սալերը քաղ գիւղացիք դնում էին տխուր, զլխակոյր: Իսկ սալերը ետեւից գնում էր մի կին՝ նոյնպէս զլխակոյր: և արտում: Արտաւորք խոշոր կաթիլները թանում էին նրա երեսը: Գրանք սատակած եղներն տեւերն էին: Գիւղացու համար եղան, առհասարակ տաւարի հիւանդութիւնը, մահը մեծ կորուստ է:

«Եղը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես, «Իմ թե ու թիկունը, դու իմ տան դուռն ես»: Ասում է Ա. Արարատեան իր «Կալի երգում»:

(Կը շարունակվի)

Ներքև ապահարկանի հարցը, յանձնեց թաղուհուն մի գրութիւն, որով ապահարկանը ապօրինի է համարուած: Միւսը անձամբ եկաւ միտքափոխելու, և արժեքի տեսակցութիւնը յետոյ, ստիպեց, որ միտքափոխելու տարադրութեամբ իրան մի դոկումենտ արվի, որի մէջ պէտք է խոստացված լինի ապահարկանի գործը վերադնուածեան չենթարկել:

Վ.Է.ՆՆԱ, 10 յուլիս: Նատաղիւ թագուհին շուտով ճանապարհ ընկնելու է դէպի Ռուսաստան:

Պետերբուրգ, 10 յուլիս: Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը վեց արդիւնաբերական դպրոցներ հիմնելու մասին: Կազմուած, Եկատերինսկայա Պետրոզավոդսկում, Պալլադ առանում և Կլեպչիկով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 10-ին

Լճերի վրա 10 ֆունտ արծէ. . .	84	40	4
Բերքի վրա 100 մարկ . . .	41	35	
Փարիզի վրա 100 ֆրանկ . . .	33	50	
Ոսկի . . .	արծէ. . .	6	77
Մարտային կուպոններ . . .	135	25	
Արծաթ . . .	1	12 1/4	
Բորսային դիվիդենդներ . . .	5	6 1/2	0
Պետ. բանկի 5% տոկոս 1-ին չըջանի. . .	100	12	

— — — — 2-րդ —	100	—	—
— — — — 3-րդ —	99	87	—
— — — — 4-րդ —	99	87	—
— — — — 5-րդ —	99	87	—
— — — — 6-րդ —	99	87	—
60/0 ռուսկայ քէնտա	146	—	—
40/0 ռուսկայ փոխառութիւն	—	—	—
Արեւելեան 5% փոխառ.	1-ին շրջ. . .	100	75
— — — — 2-րդ —	100	50	—
— — — — 3-րդ —	100	50	—
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	227	—	—
— — — — երկրորդ —	216	50	—
— — — — երրորդ աղ. կալ. բ. . .	210	75	—
Պետական. երկաթուղային քէնտա . .	100	75	—
5 1/2% քէնտա	104	—	—
40/0 Ներքին փոխառութիւն	87	12	—
50/0 դրաւ. թղթ. աղ. կալ. բանկի . .	99	87	—
40/0 վկայակ. գիւղ. հող. բանկի. . .	104	—	—
4 1/2% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. . .	—	—	—
— — — — թղթադ. . .	98	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ. . .	96	12	—
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ. .	94	87	—
Օրէնալի	95	75	—
Թիֆլիսի	98	—	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. .	100	62	—
— — — — ֆոթոկալի	99	75	—

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը կենդանի է:

Խաղաղութեան հրատարակող Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐՄԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Այս օրերս ըլլա տեսաւ.

ՄՕՍԿՎԱՑՈՒՄ

Երկրորդ ապադրութեամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔԸ

Կոչված Հայոց թաղաւորների պատկերների ժողովածուն:

Գինն է 1 ռուբլի: Դիմել ՄՕՍԿՎԱ, Հայոց եկեղեցի, Յովհաննէս ՓԱՆՕՍՎԻՆ, իսկ տոնավաճառի ժամանակ՝ Նիժնի-Նովորոդ:

1—10

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍՍԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 13/25 յուլիսի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՅ՝ EBRE (Պ. Է.Բ) շոգենաւ, նաւապետ TRAGER (ՏՐԱԳԵՐ) զէպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հալլը և Լոնդոն, մանկուկ և միջանկեալ նաւահանգիստները:

Ազնանները՝ ԲԱԹՈՒՄԻՄ ա. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՈՐԳ ԶԵՋՈՒԲԵԱՆ, ՀԵՋՈՒԲԵԱՆՅ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԻՆՈՍՅ:

2—2

ՍԻՄԵՐՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՖԻՐԱՆԳՈՒԼԵԱՆՅԸ իր եղբայրների հետ միասին ցաւօք արտի յայտնելով իր մօր՝ ԿԵԿԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՖԻՐԱՆԳՈՒԼԵԱՆՅԻ մահը, խնդրում է ծանօթներին և բարեկամներին յարգել հանգուցեալի յիշատակը և ներկայ գտնվել յուրաքանչեւ իրենց հանգիստին, որ է լինելու Հինգշաբթի օր, յուլիսի 12-ին, առաւօտեան ժամ 10-ին Միքայէլեան հիւանդանոցից զէպի Թանդոյեան սուրբ Աստուածածնի եկեղեցին:

1—1

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԳԱՅ ՈՒՍՈՒՄԵԱ-ՐԱՆԻ աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 25-ից և տարեկան թիշակը աշակերտուհիներին լինելու է 30 ռուբլի:

Նախագահ վարչութեան՝ Ղ.Լոնդ աւագ բաժ. Խարազեանց 1—1

Լոյս տեսաւ
Ժողովրդական ընթերցանութեան համայն
ԽՕԼԵՐԱ
ԵՒ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ
ԲԺ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (Թիֆլիսցի)
Գինը 5 կոպէկ.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՅ զէպի ԲԱԹՈՒՄ, Հոլլը, շաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, Հինգշաբթի 4/16 ապրիլից սկսած ԵՒ ՓՈԽԱԳԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանկուկ Տրագիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս, Հինգշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, Հինգշաբթի 26 ապրիլից (մայիսի 8-ից) սկսած:

ԲԱԹՈՒՄԻՅ ՇՈԳԵՆԱՆԵՐԸ ԳՈՐԻՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Հինգշաբթի, 21 յուլիսի (3 յուլիսի), շոգենաւ ՄԻՆԳՐԵԼԻԱ, նաւապետ ԺԻԲՈՒՄ

— 5/17 յուլիսի	— ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱՐԻԲ
— 19/31 յուլիսի	— ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ
— 2/14 օգոստոսի	— ՄԻՆԳՐԵԼԻԱ	— ԺԻԲՈՒՄ

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճ զիմել ընկերութեան ազնաններին. ԲԱԹՈՒՄԻՄ ա. Գարանիօնին, Նաբերէժնայա, Թիֆլիսի Մ. Վ. Կիտօր ԳՐԱՆՕԻՆ, նախկին Արծրունու զարէթայում, № 114. 10—10 (Հ. և Ե.)

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻԼԻԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԳԵՂ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿԻՄԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ.
ԹԻՖԼԻՍԻՄ՝ Գեղադրական ապրանքների կոփասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահ-պարոնեանցի, Մակկէրի, Սէնչի-կօվսիւ և Ագմուրօյի զեղաներում:

ЗУБНЫЕ КАПЛИ: КОР. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИР: ФЛ. 60 К.
A. W. T. K. E. F. F.

20—52 (Հ.)

ՀԱՅՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

ց1-ն Յուլիսի 1890

Պ Ա Հ Ա Ն Զ Ք				Պ Ա Ր Տ Ք			
Թիֆլիսում		Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը	Թիֆլիսում		Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ)	150,403—14	170,229—46	320,632—60	1. Հիմնական դրամադրուս	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում . .	123,713—64	471,000 —	594,713—64	2. Պահեստի դրամադրուս	179,500—64	—	179,500—64
3. Զեղուան (Disconto) մուրհակաց երկու տոկոսային	2,484,607—34	812,513—01	3,297,120—35	3. Դրամական աւանդներ՝	—	—	—
4. Զեղուան տոկոսաբեր թղթ., կարծն. և այլն. . .	18,103—14	315—67	18,418—81	ա) Պայմանաւորում	2,055,042 —	239,869 —	2,294,911 —
5. Փոխառութիւն դրամականով՝	—	—	—	բ) Գաւառացի	207,809 —	56,800 —	264,609 —
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. .	1,374,883—87	361,004 —	1,735,887—87	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	992,359—71	1,020,088—32	2,012,448—03
բ) յայտնաբեր	228,314 —	3,010 —	231,324 —	դ) Վարկային հաշիւով հասարակ.	—	330,506—12	330,506—12
գ) Սակայ և արծաթի	—	45,106 —	45,106 —	4. Թղթակիցներ՝	—	—	—
դ) Ռուկոյ և արծաթի	—	26,774—15	26,774—15	ա) Նոյս հաշիւը (Loro)	4,265,504—20	—	4,265,504—20
6. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր. . .	408,612—70	44,391—70	453,004—40	բ) Բանկային հաշիւը (Nostro)	6,158,493—87	—	6,158,493—87
7. Ռուկոյ և արտասանման փոխանակադրեր. .	21,289—60	13,837—78	35,127—38	5. Բաժնիների հաշիւը կենտրոն վարչութ. հետ	—	396,617—86	396,617—86
8. Թղթակիցներ՝	—	—	—	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնիների հետ	—	—	—
ա) Նոյս հաշիւը (Loro)	4,609,015—68	—	4,609,015—68	6. Բանկային բաժնետոմսերու անվար կտրօնների բաշիւը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 թւերին	6,983—60	—	6,983—60
բ) Բանկային հաշիւը (Nostro)	5,543,435—95	—	5,543,435—95	7. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց	67,206—57	24,520—40	91,726—97
9. Բաժնիների հաշիւը կենտրոն վարչութեան հետ	303,724—83	—	303,724—83	8. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	160,707—31	64,677—53	225,384—84
10. Բողոքուած մուրհակներ	37,291—05	—	37,291—05	9. Փոխանցիկ դրամներ	47,940—18	36,761—74	84,701—92
11. Պայմանաւորում անցուցուած փոխառութիւններ	8,905 —	3,600 —	12,505 —	10. Արդիւնք 1889 թւին	—	—	—
12. Ընթացիկ ծախսեր	23,247—77	13,121—23	36,369 —				
13. Կահարաւար և սկզբնական ծախսեր	3,068—82	3,593—05	6,661—87				
14. Յետ ստացուելիք ծախսեր	15,129—50	1,430—88	16,560—38				
Բ. Ա.	15,353,746—03	2,169,840—97	17,523,587 —	Բ. Ա.	15,353,746—03	2,169,840—97	17,523,587 —